

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3**

2013 թ. մարտի 16-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Գիտխորհրդի 35 անդամներից նիստին մասնակցում էին 26-ը:

Օրակարգ`

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/ զեկ` ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան /

2.ԳՊՀ ՀՄ ֆակուլտետի պատմության ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/ զեկ` ամբիոնի վարիչ Հ.Հարությունյան /

3.ԳՊՀ ՀՄ ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/ զեկ` ամբիոնի վարիչ Լ.Քուրքչյան /

4.Ուսանողների շրջանում 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնառության բավարարվածության վերաբերյալ անցկացրած հարցումների ամփոփում:

/ զեկ` պրոռեկտոր Ն.Կուտուզյան /

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանը: Ջեկուցողն անդրադարձավ մի շարք հարցերի, որոնք կարևոր դեր են խաղացել ֆակուլտետի բնականոն աշխատանքն ապահովելու առումով: Մասնավորապես դրանք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. Ընդունելություն և ուսանողական համակազմ, 1-ին կուրսերի առաջադիմությունը, ուսանողների` կուրսից կուրս առաջընթացը և առաջադիմությունը, դրամաշնորհներից օգտվող ուսանողների քանակը, նկատողություն, գերազանց, լավ և անբավարար գնահատականներ ստացած ուսանողները, ավարտական կուրսերի առաջադիմության համառոտ բնութագիրը և այլն: Այնուհետև զեկուցողն

անդրադարձավ աշխատանքու տեղ գտած թերություններին, որոնք ենթակա են վերացման:

ՀՄՖ պատմության ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ Հ.Հարությունյանը: Նա նշեց, որ աշխատանքներն ամբիոնում ընթանում են նորմալ հունով. տպագրվում են հոդվածներ, աշխատակիցները մասնակցում են տարբեր գիտաժողովների, ուշադրության կենտրոնում են կադրերի պատրաստման հարցերը և այլն: Այնուամենայնիվ անելիքները շատ են: Շատ դեպքերում էլ պարզապես լավ չեն ներկայացվում կատարված աշխատանքները: Ամբիոնում կան դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները, ծրագրերը, անհատական աշխատանքները: Շատ դեպքերում կարելի է օգտագործել ուսանողների ներուժը: Այդ ուղղությամբ օգտակար կլինեն ուսանողական գիտաժողովները, քանակեճերը, կլոր սեղանները, որոնց պետք է մասնակցեն տարբեր ֆակուլտետների ուսանողները:

ՀՄՖ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ.Քյուրքչյանը ներկայացրեց նշված ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը: Նա ասաց, որ ամբիոնի աշխատակիցները աշխատում են վերանայված ծրագրերով և նոր մեթոդներով, մշակվել են սեմինար, գործնական, անհատական աշխատանքների ծրագրեր, թեմաները ուսանողներին տրամադրվում են էլեկտրոնային տարբերակով: Դժվարությունն այն է, որ գրականության հիմնական մասը ռուսերեն է, որից օգտվողների քանակը մեծ չէ: Բարձրացել է ուսանողների ակտիվությունը, նրանք մասնակցում են գիտկոնֆերանսների, միջբուհական գիտաժողովների, կապ է պահպանվում լրատվության, որակի ապահովման, ուսխորհրդի և այլ բաժինների հետ: Ձեկուցողն առաջարկեց բացել <<Մանկավարժություն և հոգեբանություն>> բաժին:

Պրոռեկտոր Ն.Կուտուզյանն անդրադարձավ ուսումնառության բավարարվածության վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացրած հարցումների արդյունքներին: Քննարկելով ստացված արդյունքները՝ նա նշեց, որ դրանք կուղարկվեն ամբիոններ և դեկանատներ՝ համապատասխան եզրահանգումներ անելու համար:

Նիստի ավարտին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝

Որոշեցին՝

1. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. ՀՄՖ պատմության ամբիոնի վարիչ Հ.Հարությունյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3. ՀՄՖ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Լ.Քյուրքչյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Ուսումնառության բավարարվածության վերաբերյալ անցկացրած հարցումների արդյունքների ամփոփումն ընդունել ի գիտություն:

5. Ուսումնառության բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները քննարկել դեկանատներում և ամբիոններում, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան